

ՄՇԱԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն լեզուական մեջ:

Օտարադատությանը հիմունք են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրությունը բաց է առաջօրե 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յուրաքանչյուրը իր փոխարինիչին է ամեն լիզուով:

Յուրաքանչյուրը իր փոխարինիչին է ամեն լիզուով:
Խմբագրությունը բաց է առաջօրե 10—2 ժամ

„ՄՇԱԿ“ ԼՐԱԳԻՐ ԲԵՐԱԲԵՐՈՒՄՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. ի ն

(ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նորից գրքով և նորից պրոգրամայով ԱՄՆՆ ՕՐ (բացի տոն և տոներին հե-
տևելով օրերից):

ՊՐՈԳՐԱՄԱՄԱ. I. Տեղեկություններ կարգադրություններ, II Առաջնորդող յոգուածներ, III Ներ-
քին տեսություններ, IV Արտաքին տեսություններ, V Խառն լուրեր, VI Հեռագրեր, VII Ֆեկիտներ և
Բանասիրական, VIII Յայտարարություններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԵԼ, տարեկան 10 րուբլ, կես տարվանը 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր.,
երեք ամս. 3 ր., երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուբլ:

Գրվել կարելի է խմբագրություն մեջ հետևել հասցեով. Тифлиς, редакция «Мшак».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսություններ: Անդրկասպյան եր-
կրից: Նամակ Երևանից: Նամակ Ս. Պետերբուրգից:
Նամակ Գորիզից: Ներքին լուրեր: Ար-
տաքին տեսություններ: Անդրկասպյան թագուհու
գահական ձառն: Պարսկաստան: Նա-
մակ Պարսկաստանից: «Մշակի» հեռագրեր: Յայտարարություններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԴԿԱՍՊԱՆ ԵՐԿՐԻՑ

„Кавказ“ լրագրի մեջ տպված է
հետևել պաշտոնական հաղորդություններ:

Երեկ ես բաղդ ունեցայ շնորհաբեր
թագաւոր կայսրին կատարեալ յաղթու-
թիւնը, որ մեր զօրքերը գեներալ Սկոբե-
լեվի առաջնորդութեամբ ունեցան տեկի-
ցիների վրա հետևել հեռագրով:

Յունվարի 12-ին ինն ժամ տեղը արիւ-
նահեղ պատերազմից յետոյ մեր զօրքերը
վերցրին շուրջով Գեօկ-Տեպէ և Գեղեղի-
Տեպէ անուանված թշնամու բոլոր ամրա-
ցած դիրքերը: Թշնամու զօրքերը բոլոր
գծերի վրա ստիպված են եղել փախչել:
Նրանց ջարդում էին 15 վերստ տարածու-
թեան վրա: Յաղթութիւնը կատարեալ է:
Մենք վերցրինք մեծ քանակութեամբ գէն-
քեր, թնդանութներ, պատերազմական պա-
շարներ, բանակը և կռիւ ժամանակ վերա-
դարձրինք լեռնային երկու թնդանութներ:
Մեր կորուստները զեռ հաշուում են: Թըշ-
նամու կորուստները ահագին են: Զօրքերը
անպայման քաջութեամբ էին կռուում:

Նորից կայսերական Մեծութիւնը բարե-
հաճեց բաղդաւորել ինձ հետևել հեռագ-
րով:

Շնորհակալ եմ Աստուածանից Մեզ շը-
նորհած կատարեալ յաղթութեան համար:
Դու կը հասկանաս իմ ուրախութիւնը: Շը-
նորհակալ եմ քո կարգադրութիւնների
համար, որոնք Մեզ համար այդպիսի նշա-
նաւոր հետեանքով պատկեցան: Յայտնի
իմ խորին շնորհակալութիւնը Մեր բոլոր
քաջերին, որոնք կատարեալապէս արդարաց-
րին իմ բոլոր յայտերը: Գեներալ-ադիւտանտ

Սկօբելովին կատարեալ գեներալի աստիճան
և սուրբ Գեորգի 2-դ կարգի շքանշան ըն-
ծացից: Հրամայիր, որ շուտով ընձաների
ներկայացի գերագնացվածներին:

Կայսերական այսպիսի նոր ոգորմութիւնը
գէպի ինձ և ինձ յանձնված զօրքերը
յայտնում եմ կովկասեան զօրքերից:

Այս հրամանը տուած է կովկասեան
զօրքերին Նորին Իսկուսութիւն Մեծ. իշխան
կովկասեան փոխարքայից:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

22 դեկտեմբերի 80

Լրագրերի թղթակիցները Երևանի ամեն հա-
տարակալան հիմնարկութիւնների մասին խօսել
ու գրել են քիչ թէ շատ, բայց մեր կրթի մա-
սին լուում են, որ իր բուն կրթողական նշանա-
կութիւնը կորցրած՝ միայն թղթախաղի և շաշ-
կութեան կրկէս է դարձել չնոգելի ու վաճա-
ռական, արհեստաւոր և ուսուցիչների համար:
Այնտեղ անդամ են քաղաքի բոլոր դասակարգի
մարդիկ. դուք կը տեսնէք երկարափափա պար-
սիկներ, հինգադուխ խաներ, դուք կը տեսնէք
մանր մուշք պիսարներ, և այլ և այլն: Մեր կը-
րթի անդամները այնքան չեն ընտրվում, որ-
քան ընդունվում: Կրթի խեղճ անդամները ա-
մեն կիրակի օր «Երեկոյ» են ստանալ: Մտնում
էք ներս. դաշխաններում ճրագները վառ են. մու-
ղիկան հնչում է, կողմով կազմակերպող դաշխ-
նում պարագլ զբոսնում են, այն ինչ դա մայի
հետքն անգամ չէ երևում... Այս քանի օրերում
մի ռուս պարոն կրթի դաշխանում հրապարակա-
կան դասախօսութիւն արեց 1874 թ. Հնդկաս-
տան արած իր ճանապարհորդութիւնից: Իւրա-
քանչիւր օր, ով դիտէ հայերէն կամ ռուսերէն
կարգալ, կարող էր գրքերից աւելի շատ տեղե-
կութիւն ստանալ, քան թէ պարոնի անձամբ դա-
սախօսութիւնից:

Խօսելով տեղույս դպրոցների վերաբերու-
թեամբ՝ «Մշակի» № 214-ում կարճ կերպով շատ
ուղիղ էր նկատել պ. Նորայրը թեմական դպրոցի
հոգաբարձուների բռնած փաստակար ընթացքը:
Ի հարկէ այդպէս կը լինի և ամեն տեղ, ուր որ
մի բան կատարում են ոչ թէ օգտակարութեան
համար, այլ ուրիշներին նմանվելու համար. ի
հարկէ խախտում կը լինի մի դպրոցի դրութիւնը,
որի ծախքերը եկամուտից աւելի են և որի չնչին
գրամագլխի մասն էլ կը բաժանվի իրանց աղքա-
կանների ու սիրելիների մէջ, իբրև պարգև ան-
խնայ աշխատանայ. չը մտանալ, որ հոգաբար-

ձուներից մինն էլ «Պատկ» մանկավարժական լը-
րագրի խմբագիր պարոն Գոկտօր Վ. Պապաջա-
նեանցն է...

Կանդի նորարաց Սահակաւորական օրինորդաց
դպրոցը այս տարի ցած իջաւ քաղաքը և կար-
ծեա աւելի կենդանութիւն ստացաւ. սանուհիներ
թիւը կրկնապատկւ է և ի հարկէ այս ամենի
համար պարտական ենք այնտեղի հմուտ և ժրա-
ջան վարժուհի օրինորդ Տէր-Մարութեանցին, որ
իր բարձր ուսումնով և հիմնադրի ձեռագործու-
թեամբ յայտնի է ողջ Երևանին:

Քաղաքային վարչութեան և խորհրդարանի
յարաբերութիւնները խիստ սառն են, և հէնց
այդ է պատճառը, որ կրկնայի քայլերով են յա-
ռաջ գնում գործերը, եթէ չանենք խեղդելովն:
Եղանակները առ այժմ անցնում են շատ բարե-
խառն. քաղաքացիք սպասում են դարձանք, ա-
ւելի նրա համար, որ արդէն միջոված է Երեւ-
նից 40 վերստ հեռավորութեամբ գտնված Գրի-
բուլայի ջուրը հանեն բերնի քաղաքը, քանի որ
ամառ ժամանակը այնքան շատ զգալի է լինում
ջրի պակասութիւնը: Այս մեծ գործին խոստա-
ցել է օգնել պ. Ղեմտը Ղազարեանը. նա յանձն
է առել մինչև 10 կամ գուցէ և 20 հազար ռուբ-
լով օժանդակել: Մեծ և բարի գործ:

ՎՐՈՂ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻՑ

Գեկտեմբերի 26-ին, 80

Այս անգամ ես կամենում եմ խօսել մի նիւ-
թի վրա, որ իւրաքանչիւր հայի համար հետաքը-
քիր է, այն է Մոսկվայի Լազարեան ձեռնարանի
վերաբերութեամբ:

Արդէն 1815 թ. կը բացվեց այդ ձեռնա-
րանը, Լազարեանները դրեցին ապահովութեան
մի դրամագլուխ այդ դպրոցի գանձարանը, մօտ
մի միլիոն ռուբլ, որպէս զի այդ փողերի հաշուով
ի միջի այլոց, Լազարեան ընտանիքի հաշուով
դաստիարակվին այդպիսի միջ աւարակներ: Որովհետեւ
այն ժամանակ, երբ բացվեց ձեռնարանը, ամբողջ
հայոց աշխարհը դեռ եւ խաւարի մէջ էր, չունե-
նալով գրեթէ ոչ մի ուսումնարան, այդ պատ-
ճառով Լազարեանները մտածեցին իրանց ձեռնա-
րանի մէջ դաստիարակել և հոգեւորականութեան
համար երկրասարքներ, ընդունելով աշակերտ-
ներ նոյն իսկ հոգեւորական դասակարգից: Այդ
նպատակով սահմանեցին այն օրից 50 վաղան-
սիայից 30 հատ տալ աշխարհականների որդե-
կերանց, իսկ 20 հոգեւորականների դասակներին:

Բայց այսչափ տարվայ մէջ, որ մօտ 70 տա-
րի է, Լազարեան ձեռնարանում աւարտած հազա-
րաւոր հոգեւորականների դասակներից գրեթէ
երկու երեք հատ չը կայ, որոնք իրանց նուե-
րէին հոգեւորականութեան կողմանէ փոխել
ի միջի այլոց, Լազարեան ընտանիքի հաշուով
դաստիարակվին միայնակցին իրանց դիտաւորու-
թեան մէջ: Հոգեւորականների որդիք, ուսում ա-
ւարտելուց յետոյ, աշխարհական էին դառնում:

Այնուհետեւ, 1815 թ. կը յետոյ մինչև այժմ
բացվել են՝ Ներսիսեան դպրոցը, հայաբնակ գա-
ւառական քաղաքներում այլ միջնակարգ հոգեւոր
դպրոցներ, վերջապէս և Էմմանուէլ ձեռնարանը,
որոնք բոլորն էլ նպատակ ունեն պատրաստել
գլխաւորապէս հոգեւորականներ: Ուրիշ հայոց է,
թէ որքան համարում են այդ դպրոցները իրանց
նպատակին, բայց քանի որ հարկը հազարներ
են վառնվում մեր հոգեւորականների կրթու-
թեան համար մեր բոլոր դպրոցներում, այլ եւ
ինչ հարկ կայ պահպանել Լազարեան ձեռնարա-
նում սկզբնական 20 վաղանախ ամբողջու-
թեամբ հոգեւորականների դասակներին կրթելու
համար: Միթէ աւելի օգտակար չէր լինի, եթէ
20 տեղը բաժանվէր երկու մասի վրա, որոնցից
տասը դարձնաւ պահպանել հոգեւորականներ պատ-
րաստելու համար, իսկ մնացած 10 վաղանախ-
ներ յատկացվէին կովկասեան այն հայերի գա-

ւակներին, որոնք օտարացել են իրանց աղքա-
ւութիւնը և մայրենի լեզուից և խորթանում են
նոյնպէս իրանց պապերի հաւատից, դիմելով օտար
դաստիարակներին: Ես խօսում եմ գլխաւորա-
պէս Վրաստանի, Կախեթի, Գորու, Գուրայիսի
օտարացած հայերի և Նուխու կողմերի ուսուցիչ
հայերի մասին, մի խօսքով կովկասեան այն բո-
լոր հայերի մասին, որոնք հետզհետէ կորցնում
են թէ լեզուով և թէ աղքատութեամբ իրանց հայ
լինելու մասին ինքնաճանաչութիւնը:

Ի հարկէ աւելի էլ լաւ կը լինէր, եթէ Լազա-
րեան տունի այժմեան ներկայացուցիչ իշխան
Արամէլիք-Լազարեանը, հայրենասիրական դպաց-
մունքից թեկադրված աւելացնէր առհասարակ
վականականների թիւը, այն ժամանակ հարկ չէր
լինի հոգեւորականների համար եղած վականախա-
ները կիսով չափ պակասեցնել, վերս յիշած օ-
տարացած հայերի դասակներին միւս կէտը տալու
համար: Այն ժամանակ կարելի էր ընդունել
Լազարեան ձեռնարանում և թիւրքաց Հայաստա-
նից մանուկներին: Բայց եթէ հնար չը կայ վա-
կանականների թիւը աւելացնել, գործէ ցանկալի
է որ մտցրած լինի այն փոփոխութիւնը, որ ես
վերս յիշեցի:

Ցանկալի էր մանաւանդ ընդունել կովկասի
այնպիսի տեղերից աշակերտներին, որտեղ հայ
տարրը թէեւ օտարացած է, բայց բազմաթիւ է
է, ինչպէս օրինակ Նուխու կողմերում, այն ինչ,
օրինակ, Գուրայիսի կողմերում, կամ Կախե-
թում հայերը քիչ են թիւով: Այս խորհրդը յա-
րուցանելով ես, ի հարկէ, հարցը չեմ կամե-
նում միջնել, այլ թողնում եմ նրա վրա իշխ-
նան Արամէլիք-Լազարեանի խոհեմութեանն ու
առողջամտութեանը:

Երեկ լսեցի, որ Ս. Պետերբուրգի և Մոսկվայի
հայ եկեղեցիների կալուածական գործը միջովե-
ցաւ միմիկտորութիւնից յօգուտ իշխան Արամէ-
լիք-Լազարեանի, այսինքն միջովեցաւ, որ այն,
ինչ հաստատել են յաջորդաբար իրանց ստորա-
գրութեամբ չորս կայսրեր՝ Թոմսոն Ս. Պետեր-
բուրգի և Մոսկվայի եկեղեցական կալուածների
անօրինութիւնը Լազարեանների ժառանգների ի-
րաւունքի տակ, միայն դարձեալ անփոփոխ:

Ուրեմն այն աղգասէր պարոնները, որոնք
իրանց շահաւորական նպատակների համար որո-
գայթներ էին լարում և խնդրեցանք անում
Լազարեաններին դէմ, ամօքով մնացին:

Ս.

ՆԱՄԱԿ ՓՈԹԻՑ

21 դեկտեմբերի 80

Փոթի քաղաքը Միլիարդիայի քաղաքներից
մէկն է, որը գտնվում է Սև ծովի ափին: Վա-
ճառականութեան կողմանէ փոթին յիշվում է
ծովային դուռն կովկասից դէպի արաւասանան
և Ռուսաստան և կենտրոն ապրանքներ դարդա-
կելու և բարձելու շոգեխաւից: Ուրիշ երկու
փայտաշէն եկեղեցի, այն է ուսւայ և հայոց:
Քաղաքի բնակիչներն են՝ վրացիք, միլիարդ,
գուրիացի, հայ, ռուս և յոյն: Հայերն ու յոյնե-
րը ամենաբիւք բաժինն են բնակիչներից, բայց
վաճառականութեան գլխաւոր մասերը իրանց
ձեռքերումն ունեն բռնած: Հայերն ունեն մէկ
խոհեմ հայ քահանայ, որի շնորհիւ արդէն փոք-
րիկ հայոց ուսումնարան են մտադրի բանալու և
որի համար արդէն փող է ժողոված և ժողովում
է: Բոլոր հայերը, թէ լուսաւորչական և թէ կա-
թօլիկ այնպիսի մէկ ունեն միմեանց հետ, որ
մի օր չեն կարող անցկացնել մէկն առանց միւ-
սի, որ չը յայտնեն միմեանց իրանց կարծիքները:
Բոլոր հայ կաթօլիկները (բացի ինչինովից, որը
չէ իմանում. թէ ինքն ինչ է), յաճախում են
լուսաւորչական եկեղեցիներ՝ ունեն եկեղեցական
գործերի մէջ այնքան իրաւունք, ինչքան լուսա-
ւորչականներն, և եկեղեցու բոլոր հոգերն հոգ-

րական օրէնքները, կառավարութիւնը անկարող է զսպել իրանդացի ապստամբներին: Այն ժամանակից որ սկսվել է Պարսկի զատաստանական գործը, իրանդիան համեմատաբար հանգիստ է, բայց հանգստութիւնը ժամանակաւոր է և իրանդական առաջնորդներէն ներքնված:

Անգլիական կառավարութեան համար անհրաժեշտ է խիստ միջոցներ գործադրել մինչև որ քննվի կալուածական վերանորոգութեան օրինակիծը: Երբ ամենքին յայտնի կը լինի այդ օրինակիծը, նա կը հանգստացնի իրանդացիներին մեծամասնութեանը և իրանդացի խռովարարներին կը զրկի այդ մեծամասնութեան համակրութենից և օգնութենից: Նրկիրը կատարելապէս հանգստացնելու համար պէտք է լորդերի ժողովը հոգայ և իրանդիային շնորհէ այն օրէնքները, որոնց նա մի քանի ժամանակ առաջ մերժեց, չը նայելով կառավարութեան իրաւացի պահանջներին:

Հեռագիրը նորերումն հաղորդեց, որ Վըլադաւոն հիւանդ է: Այս երկրորդ անգամն է, որ Վըլադաւոն հիւանդանում է այնպիսի մի ժամանակ, երբ նրա աշխատանքները և ներկայութիւնը մինիստրներին խորհուրդի նիստերին ամենից անհրաժեշտ է: Յայտնի է, որ արեւելեան հարցի նորից ծագելու պատճառը բերլինի թերի դաշնագիրն է, որ Բիսմարկի քաղաքականութեան հետեւանքն է. նոյն ետական քաղաքականութեան հետեւանքն են իրանդիայի մէջ և զած անկարգութիւնները, աֆգանական պատերազմի ծագելը և բոհեմերի ապստամբութիւնը: Պարլամենտի այժմեան նիստերի ժամանակ ազատամիտ կառավարութիւնը պէտք է ուղղել նախորդ կառավարութեան սխալները, իսկ Վըլադաւոն ներկայութիւնը պարլամենտի մէջ և նրա աշխատանքները մինիստրութեան մէջ այժմ չափազանց անհրաժեշտ են, մանաւանդ եթէ ի նկատի առնենք, որ Վըլադաւոն միակ մարդ է, որ կարող է առաջնորդել ազատամիտ կուսակցութեանը և հաշտեցնել այդ կուսակցութեան բազմաթիւ բաժինները:

ՊԱՐՍՅԱՍՏԱՆ

Թավրիզից գրած մանաւոր նամակներէց, որոնք ստացվեցան Թիֆլիսում, բաղում ենք հետեւեալ լուրերը:

Ինչքան էլ սարսափելի էին շէյխ Իբրահիմի առաջնորդութեամբ Պարսկաստան եկած քիւրդերի բարբարոսութիւնները, բայց նրանք ոչինչ չեն համեմատելով այն բարբարոսութիւնների և գազանութիւնների հետ, որ գործեց Թէյմուր-փաշան, Մաքուի խանը, որ հասաւ Ուրմիայի կողմերը իր գործով իրր թէ քիւրդերին զսպելու համար, ուրեմն որպէս պարսից տէրութեան բարեկամ: Նա ճշմարիտ է փախցրեց քիւրդերին, բայց ինքն սկսեց պարսկահպատակ թէ մահմեդականներին և թէ մանաւանդ քրիստոնէաներին աւելի էլ նեղել, կողոպտել, սպանել տալ: Թէյմուր-փաշայի մարդիկը սկսեցին կանանց և օրիորդներին բռնաբարել, տղամարդկանց սպանել: Քրիստոնէայ գիւղերը այժմ կառարկելապէս կողոպտված են. գիւղները շարժվելով ընկած էին գիւղերի փողոցներում: Թէյմուր-փաշան մի օրվայ մէջ կողոպտել տուեց Ուրմիայի ամբողջ բաղաւրը, մանաւանդ կողոպտել տուեց քրիստոնէաներին:

Ամբողջ Ուրմիան կատարելապէս աղքատացաւ և վերջին ծայր թշուառութեան մէջ է: Յիսուս հազար քրիստոնէայ ընտա-

նիքներ, հայեր, ասորիներ և այլն, օրական հացի կարօտ են:

Ահա, ուրեմն, այն պարսից զօրքերը, որոնք գալիս են իրանց հպատակներին պաշտպանելու արիւնարբու քիւրդերի դէմ, բայց իրանք աւելի մեծ բարբարոսութիւններ, վայրենութիւններ և գազանութիւններ են գործում նոյն իսկ այն բնակիչների մէջ, որոնց պաշտպանելու համար էին եկած:

Թավրիզից գրում են յունվարի 1-ից որ այդ քաղաքի բնակիչները նեղութեան մէջ են հացի թանգութեան կողմից: Հացի լիւրը 1 զուան 12 շահի է բարձրացել, այն ինչ տաս օր առաջ հացի լիւրը 18 շահի արժէր և առնող չը կար, իսկ այսօր դժուարութեամբ է մարդ հացը գտնում:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՅԱՍՏԱՆԻՅ

Գալթիք, 3 յունվարի

Մեր Գալթիքի մոտացութեան տակ ընկած հայ թաղօնի հարցը կրկին զարթեցաւ: Այս անգամ խնայողական ընկերութիւնը նրան թե և թիկունք դառնալով առաւ իր խնամոց տակ: Լիւլալ թաղում կառուցած դահլիճը խախտւում էր արդէն քանդվեցաւ և տեղի հեռացուցութեան պատճառով էլ անյարմար էր և մանաւանդ որ շինված էր եկեղեցու բակում: Այժմ բուն քաղաքի մէջ, հայոց թաղում, պ. Գորոյի անցքի մոտ կից փողոցի պարսկերէնի մէջ խնայողական ընկերութեան ծախքով շինվեցան մի նոր թատրոնական դահլիճ, որը կարող է պարտնակել մինչև 150 ամբող, այլ և ունի 3 լծակներ: Թատրոնի մէջ մինչև բարեկենդան մի քանի ներկայացումներ տալ, որոնցից առաջինը տեղի կունենայ յունվարի 10-ին. արդէն պատրաստվում է «Ալլալ Երկրորդ» ողբերգութիւնը և «Պուրսոնակ» կատակերգութիւնը: Քրիստոնէայի թուրքերէնի թարգմանած, որպէս զի հասկանալի լինի թատրոնում գտնվող եւրոպացիներին և պարսիկներին, թէ Բուն խնդրից դուրս եմ չեղում, բայց ես այստեղ կուղէի ասել մի քանի խօսք: Ամբողջ Արապատական նահանգի տեղական լեզուն թուրքերէն է. ժողովուրդը խօսում է թուրքերէն, բայց որովհետեւ գրականութիւն չունի և մի յատուկ դպրութիւն չունի, նա գրում է պարսկերէն—տիւրք լեզուն. մինչև անգամ քիւրդիստան դաւառը, որ խօսում են քիւրդերէն՝ գրելու ժամանակ ստիպված են իրանց խօսածն ու մտածածը յեղաշրջել պարսկերէնի, ըստ որում քիւրդերն էլ կորցրել են իրանց գրական լեզուն, իրանց արժեքաբեւ:

Մեր թատրոնական խումբը, որ կազմված էր մի տասնեակ աշխույժ երիտասարդներից, չը նախելով որ նրանցից մի քանիսը այժմ բացակայ են դժբաղդաբար, մնացածները մեծ եռանդով գործը առաջ են տանում, ընդունելով իրանց մէջ մի քանի նոր ուժեր. յոյս ունենք, որ ներկայացումները յաջողակ կանցնեն:

Այժմ ի դէպ է, որ մի քանի խօսք էլ մեր խնայողական ընկերութեան համար ասեմ, թէ ինչ է այս ընկերութիւնը և ինչ է շինում: Այս ընկերութիւնը կազմվեցաւ անցեալ 1880 թ. յունվարի սկզբից. ես սրա մասին անցեալ տարի գրել էի «Մշակին», բայց իմ այդ նամակը խմբագրատուն չէր հասել: Խնայողական ընկերութիւնը մի հաստատ և հիմնաւոր կանոնադրութիւն ունի 60 երիտասարդ անդամակիցներով, որոնք անփոփոխ են և նրանց թիւը սահմանափակ. նա ունի մի գործադիր ժողով, որ ընտրվում է բոլոր անդամակիցներից քուէարկութեամբ: Ընկերութեան նպատակն է նոյն երիտասարդաց ապագան ապահովել, նրանց իւրաքանչիւրից ամսական 8 զուան կամ 3 ռուբլ թղթադրած վճար ստանալով, իբր աւելորդ ծախքերի խնայողութիւն: Անդամակիցները 1880 թ. յունվարից մինչև ապագայ 1900 թ. յունվարը, այսինքն 20 տարի շարունակ կամ 240 ամիսներ պարտաւոր են իրանց ամսական վճարը հատուցանել ընկերութեան գործադիր ժողովին առանց ընդհատելու: Եթէ որ մի անգամ իր վճարը ուշացնում է մինչև մի ամբողջ տարի, նա զրկվում է ընկերութիւնից և նրա տեղ ընտրվում է մի ուրիշը. եթէ որ մի անգամ մեռնի, նրա մինչև այն ժամանակ վճարած գումարը իր սովորելով սրվում է մեռնողի ժա-

ռանդին, բայց ոչ յառաջ քան 1900 թ. յունվարը, որովհետեւ իրաւունք չը կայ 20 տարին չը լրացած ընկերութեան գումարին մի որ և իցէ պատճառով ձեռք տալ կամ նրան բաժանել: Եթէ ընկերութիւնից մի անգամ կամենայ բաժանվել, նա կը զրկվի մինչև այն ժամանակ իր վճարածից: Այս ընկերութեան գէվիզն է «Գալթիքի հայ երիտասարդաց խնայողական ընկերութիւն» 20 տարի պայմանագրով: Ընկերութեան գործադիր ժողովը, որ 60 անդամակիցներից տարին ստանում է մօտ 2000 ռուբլ, առ այժմ այդ գումարը տոկոսներով է շահացնում իր 2 պատուաւոր գանձապետների մօտ, որոնք վարկ ունեցող վաճառականներ են, իսկ երբ մի քանի տարուց յետ այդ գումարը գտնէ հասած կը լինի մինչև 10 հազար ռուբլ, այն ժամանակ գործադիր ժողովը բոլոր անդամակիցների հետ խորհելով (մի ընդհանուր ժողովում) պէտք է մի շահագիտական գործ սկսէ, օրինակ, մի բանի, մի կանաւոր, կամ մի առեւտրական ճիւղ դէպի Ռուսաստան կամ մի այլ երկիր, միշտ Գալթիքը կենտրոն ունենալով: Եթէ որ գործադիր ժողովը դժուարութիւնների չի հանդիպի, եթէ որ նրան անմիջական վտանգներ չեն սպառնալ, եթէ որ նա անապթաք կը յաւատեն մինչև 20 տարին և կը գործէ իր պարտաւորութիւնների համեմատ, այն ժամանակ ընկերութիւնը կարելի է ասել որ կունենայ մի սարսափելի գումար: Իսկ երբ 20 տարինը կանցնեն, գործադիր ժողովը հաշիւ կը տայ բոլոր անդամակցութեան և բոլոր շահած կապիտալը հաւաքարարպէս կը բաժնէ 60 անդամակիցներին, որոնցից իւրաքանչիւրը եթէ գործերը յաջող գնան կարող է ստանալ 2 կամ 3 հազար ռուբլի, գուցէ և դրանից էլ շատ: Մեր երիտասարդներից շատերը 20 տարի չանցած արդէն ծերացած կը լինեն և գործելու ուժից ընկած, այդպիսիների համար մի բաւականին չափ միսթարական երեւոյթ կը լինի սա և մի լաւ ապրուստի միջոց, էլ չենք խօսում այնպիսիների վրա, որոնք ընկած կը լինեն աշխարհիս բեր-մունքների չար և սաստիկ նալաճանքների (որ Աստուած մի արասցէ) տակ: Թէ որչափ կը փութվեն հանգամանքները 20 տարվայ մէջ, դա ժամանակը ցոյց կը տա: Ուրեմն ընկերութեան անունը նրա համար է խնայողական, որ խնայողականութիւն ունենայ իր անդամակից երիտասարդների ապագայի համար:

Խնայողական ընկերութեան մի տարվայ շըրջանը անցաւ և նպաստաւոր. նա մի քանի օրից յետ իր միամտաց գործունէութեան հաշիւը պէտք է տայ ընդհանուր ժողովին, որ լինում է տարին մի անգամ, նա պէտք է կատարէ մի և նոյն ժամանակ իր առաջին տարեկարծի հանդէսը:

Ամեն կողմից ցրտի և թանձր ձիւնի ձայնի ին լսվում նոյն իսկ Արապատական դաւառակներից, բայց մինչև օրս մեր քաղաքը ձիւն չէ եկած. մի երկու անգամ միայն ձիւնը, որպէս մանրամաղ փոշի երևացել է օդում, որ գետին չը հասած հալուել է. եղանակը այստեղ անցնում է որպէս գարուն:

Առ այժմ «Գրական խնդիր», նոյն միութիւնը և նոյն արշաւանքները ձմեռվայ հետ քնած են. դժուար է գուշակել, թէ արդե՞ք գարնանը դրանք կը սկսեն նորից իրանց չարագործութիւնները, թէ ոչ. դժուար է գուշակել նոյնպէս, թէ ինչ հետևանք կունենայ և թէ ինչ կը ծնի «Գրական միութիւնը»: Պարսկական կառավարութիւնը իր բոլոր բանակներին զինադադար տուեց մինչև գարուն, որ այն ժամանակ դարձեալ այդ բանակները պէտք է գնան դէպի Քրդստանի սահմանները դէն ի ձեռին և, որպէս լսում ենք, դեռ ուրիշ զօրքեր էլ պէտք է նորից կանչվին դէնքի տակ: Համբ աղան երևում է, որ ընդունելութիւնը չէ գտել Թիւրքիստան և նրա բարեկամական կապակցը խզված են երևում Եփեսոս հետ. նա այժմ գտնվում է Սէրդաշու լեռներում, փորձելով չարքներ հասցնել պարսիկներին, բայց լեռների ամենաթանձր ձիւնից բաւական պատասխան է լսում: Եփեսոս մի ուրիշ խորամանկութիւն է գործ դնում թիւրքաց կառավարութեան մօտ. «Ես կամ իմ որդիս երբեք չենք յարձակվել պարսից վրա, դա եղել է նրանց կողմից. երբ ես իմացայ, որ Համբ աղան ապստամբվել է և զինվել մեր կողմը, ես նրան յանձնեցի Եփեսոս կողմին, որ տանէ Սովոքուրդը և միջնորդէ հայտնեցնելու, բայց անիրաւ պարսիկները կամենում էին որդուս սպանել, ամեն կողմից դէնքի չառախելն լսեցի և որդուս մասին կասկածանքների մէջ մնալով ինքս անձամբ Ուր-

մի գնացի, ուղում էի քաղաքի մզկիթը ժամել և աղօթել, նրանք ինձ թնդանօթի գոռոցներով պատասխանեցին. անհարացած մի օր «Մահամէ» դի խաղաղութիւնը ասեցի ձեզ հետ լինի» և ես վերադարձայ իմ տեղը, ասել է Եփեսոս:

Սպէնաւարը, որ Սովոք-բուրազ էր, այնտեղից անցել է Ուրմի և յետոյ Սալմաստ և այժմ նա խոյ է, որտեղից մինչև մի շարաթ կը վերադառնայ Գալթիք: Նա ճիշդ մի շրջան արեց Ուրմիի ծովակի չորս կողմը, նա լաւ քննեց Քրդստանի սահմանները, տեսաւ նրանց արած աւերածնեքները: Սպէնաւարը թողած է մի քանի հազար պահապան զօրք սահմանի վրա, աւստրիացի հրահանգիչ լիօթրենան Բիկօլիչի հրամանատարութեան տակ, որ ձիւնը զօրաց զլիւսաւորն է, իսկ լիօթրենան Չէքը, որ հետևակ զօրաց կիւսաւորն է, օրերումս իր կրթած զօրքերով իկաւ Գալթիք: Նա մի օր այստեղի զօրաց հրապարակում մի եւրօպական ձկն մանուկի արեց, զօրքերը լաւ խաղում էին. թագաժառանգ իշխանը նրան ընծայեց մի թանգապին շալ, իսկ նրա բաւալիօնին ընծայեց 200 թուան: Այդ բաւալիօնի պաշտօնակալները Թէհրանի ադունական պարսիկներից են նոր ձեռով հանձնած:

Արմենակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 15 յունվարի: Այսօր Ձմեռային պալատի մէջ տեկնիցներին յաղթելու պատճառով եղած գոհութեան մաղթանքի ժամանակ Պետրոպոլիսյայ ամրոցից թնդանօթներ արձակեցին: «ПОРЯДОКЪ» լրագիրը հաղորդում է. թիւրքաց զենապանտունը Բ. Գրան շրջափակումով յայտնեց արտաքին գործերի մինիստրութեանը, որ ուսաց զենապանից Բ. Գրանը ներկայացրած գրութեան համեմատ, թիւրքաց կառավարութիւնը կարգադրեց միջոցներ գործադրել քիւրդերի դէմ, որոնք մնասում են Ռուսաստանի շահերին, ապստամբվելով Պարսկաստանի դէմ, որը, ոյժ չունենալով ընդգիծմանը քիւրդերի ահազին հրոսակներին, իր զենապանների միջնորդութեամբ շատ անգամ խնդրել է Ռուսաստանից և Թիւրքիայից ընդհանուր միջոցներ գործադրել քիւրդերի դէմ, որոնք աւերում են պարսկական նահանգները: «ПОРЯДОКЪ» լրագիրը հաղորդում է. անգլիական զենապանտունը բանակցում է ուսաց արտաքին գործերի մինիստրութեան հետ այն սահմանների մասին, ուրից պէտք է անցկացնվին Սալադիկի (Կասիս) Ռուսաստանից նոր նուաճված առապատների մէջ: Պաշտօնապէս հրատարակված է Բարձրագոյն հրովարտակ գեներալ Սօբելևիի սնունդի, որ յիշում է նրա ծառայութիւնները և շնորհում է նրան սուրբ Գեորգի 2-դ կարգի շքանշանը:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 15 յունվարի: Եունվարի 14-ին հրատարակված Բարձրագոյն հրամանով գեներալ Սօբելևի ինֆանտերիայի գեներալի աստիճան է ստացել տեկնիցներին դէմ արած գործերի պատճառով: Այսօր, յունվարի 15-ին տեկնիցներին փառաւորապէս յաղթելու պատճառով պալատի մէջ պէտք է ժողովին բոլոր գեներալները, շտաբ և օրեր-օֆիցերները թէ զվարդիայի, թէ այլ զօրքերի և թէ նաւատորմի, գոհութեան մաղթանք լսելու համար: Գեներալ-մայոր Լճակին նշանակված է Թիֆլիսի նահանգական գեներալ-կան կառավարիչ: Պետերբուրգի գուման Պրոքիպսկուն Ս. Պետերբուրգի պատուաւոր քաղաքացի ընտրեց:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 15 յունվարի: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 95 ռ. 12 Կ., երկրորդ 93 ռ. 12 Կ., երրորդ 93 ռ. 50 Կ., չորրորդ 93 ռ., ներքին 5% տոմսի փոխառութեան տոմսակը արժէ 222 ռ. 50 Կ., երկրորդ 221 ռ. 75 Կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ռ., երկրորդ 92 ռ. 12 Կ., օսկի 7 ռ. 82 Կ.: Ռուսաց 1 ռուբլ լճագոնի վրա արժէ 25,09 պէս, ուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 214 մարկ, Վարսիլի վրա 265 Փրանկ: Տրամագրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄԷ և նոյն տեղը ԽԻՆԱՑԻ
ԻԻՂ, մազերը ամրացնելու հա-
մար, 1 ր. ամանը զրօնն զլիա-
ցափ զէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ-
ՊՕՆ և հօտաւէտ ջրեր և այլն:

3—100

ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ըն-
փօղվելներ, կողպէքներ, մատուցարաններ, ա-
մաններ, դանակներ, գդալներ, թէյաման-
ներ, բաժակներ, թամբեր, գուլպաներ
կանաչեւ տղամարդկանց, թաշկինակներ,
մակիւնտօշներ, կալէնիք, թուղթ, մատու-
ներ, տետրակներ, զբիւնք ամեն ձեռքի
համար և այլն, 20 մինչև 40% աւելի է-
ժան քան թէ ուրիշ տեղ: Արժրուեա-
լայլէրէում:
100—33

ՄԻ ՖԻՐԱՆՍԻԱՅԻ, որ ղեկավար ու
ն, և որ 20 տարի շարունակ դասառու
ՅԻՆ էր անում ՓԱՐԻԶՈՒՄ, կը կա
մենար դասեր տալ: Բացի ՖԻՐԱՆՍԻ
ԻՆ Լեզուից, նա ուսուցանում է ԳՐԱ
ՈՒՀՈՒԹԻՒՆ և ամեն տեսակ ՆԸ
ՄԱՐԶՈՒԹԻՒՆ: Նրա ԱՄՈՒՄԻ
ԵՆ յայտնա Ֆրանսերենի դասեր է տա
ն և կը կամենար օրվայ մէջ մի քանի
ամ պարապել Հասակ առած օրիորդների
նտ:

Պիմել պ. Եղեկեանին, Էնֆիաճեանցի
տանը, Պփօրհանսկայա փողոց N: 3, Թիֆ-
լիսում:

Սահմա են ամեն տեսակ ԶՈՒԳՈՒ-
ՆԻ և ՊՂՆՁԻ կտրամաքներ, Գեղոր-
գեան նկղեցու մօտ, ՄԴԻՎԱՆԻԻ
տանը Կախեթու գինիների մաքանում:

1—25

1-6

[illegible]

VICHY

Французские

PARIS, 22, boulevard Montmartre
GRANDE-GRIFFE. Отъезжает с
какого расположения, дурного пищеварения,
засорения печени и селезенки, завала
мочевой болзны и проч.

HOPITAL. Отъ трудного пищеварения,
тяжести желудка, потери аппетита, с
въ желудкѣ.

CELESTINS. Отъ боли въ поясничномъ,
мочевого пузыря, каменной болзны,
дырты, потери аппетита.

HAUTEVILLE. Отъ боли въ поясничномъ,
мочевого пузыря, каменной болзны,
дырты, потери аппетита.

ТРЕБОВАТЬ название источника
на коробкѣ.

Рѣдѣлѣннѣмъ Вѣдѣлѣннѣмъ

ԼՕՆԻԹՆԻ ԽԱՆՈՒԹ, ԱՌԵԻ-
ՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՏԱԿ բացված է
ճախերէ համար իսկական, լաւ ԹԵՅՆ
և այլ ԱՆԳՒԼԻԱԿԱՆ ԱՊՐԱՆՔ-
ներ, օրինակ, ՀՐԱՅԱՆՆԵՐ, ԲԵ-
ՎՈԼՎԵՐՆԵՐ, ԿՈՂՊԵՔՆԵՐ, ամաններ,
սաւառներ, ՄԱՀՃԱԿԱՆ ՆԵՐ, դանակ-
ներ, գրպաններ, ԹԵՅԱՄԱՆՆԵՐ, շո-
կոյանք, ԿԱԿԱՕ, հոտաւէտ ջրեր, ՍԱ-
ՊՈՆ, Թաշկիւսկներ, ԳՌՈՒԼԲԱՆՆԵՐ,
ԹՈՂՈՂ, մատաւաններ, ԳՐԻԶՆԵՐ, Թամ-
բուր, սուկրիս: Զրթաց լինող ՊԱՆՏՕ-
ՆԵՐ, մակ-խոտաշներ: Հաճամաշի իսկա-
կան ՍԻԳԱՐԱՆՆԵՐ և անգլիական կոն-
ֆէկաներ:

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.